Պարոն/Տիկին ___________ *ին*

ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա.Սաֆարյանին

____

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել համիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

____

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

*Ա.Սաֆարյան*___________________

«22» 10 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի հոկտեմբերի 16-17-ին Հունաստանի Աթենք քաղաքում կայացած էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) սպառողների պաշտպանության կոմիտեի հանդիպմանը մասնակցության

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը – Անժելա Առաքելյան, Լուսինե Ալեքսանյան

2.Զբաղեցրած պաշտոնը- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության դիմումների քննարկման բաժնի պետ, դիմումների քննարկման բաժնի գլխավոր մասնագետ

3.Գործուղման վայրը և ժամկետները – Հունաստան, Աթենք, 2024 թվականի հոկտեմբերի 15-18-ը

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում) – էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիա (ERRA)

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը) - էներգետիկ կարգավորողների տարածաշրջանային ասոցիացայի (ERRA) սպառողների պաշտպանության կոմիտեի հերթական հանդիպմանը մասնակցություն

6.Քննարկված թեմաները (հարցերը)

- էներգետիկայի բնագավառում սպառողների պաշտպանությանն առնչվող՝ երկրների վերջին նորությունները/փոփոխությունները

- Կարգավորող մարմնի դերը ծառայություններ մատուցողի սպառողների փորձի բարելավման հարցում
- Մանրածախ առևտրի պայմանագրերի թափանցիկության բարձրացում՝ գունավոր ազդանշանների ներմուծմամբ
- Դինամիկ գնագոյացման կարգավորող դաշտ
- Խոցելի սպառողներ
- Էներգետիկ սպառողներին թվայնացված ծառայությունների մատուցում

16.10.2024թ

Սպառողների պաշտպանության կոմիտեի հանդիպման ժամանակ քննարկվեցին էներգետիկայի բնագավառում սպառողների պաշտպանությանն առնչվող՝ երկրների վերջին նորությունները/փոփոխությունները: Յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ ելույթի միջոցով ներկայացրեց իր երկրի փորձը. էներգետիկայի բնագավառի օրենսդրական փոփոխությունները, սպառողների ընդգրկվածությունը էներգետիկ շուկաներում, երկրների կարգավորող մարմինների դերը և գործառույթները: Քննարկվեցին նաև էներգետիկ համակարգում սպասվելիք և նախատեսվող բարեփոխումները, որոնք ուղղված են լինելու սպառողների պաշտպանության բարձրացմանը,ազատ շուկայում մատակարար-սպառող հարաբերությունների կարգավորմանը: Կլոր սեղան քննարկումներն հնարավորություն տվեցին հարցերի ու պատասխանների միջոցով ստանալ լրացուցիչ տեղեկություններ, երկրների օրինակների ներկայացման հիման վրա ավելի ամրապնդել ձեռք բերված տեղեկատվությունը:

Քննարկման հաջորդ թեման եղել է «Կարգավորող մարմնի դերը ծառայություններ մատուցողի սպառողների փորձի բարելավման հարցում»: Մասնակից երկրների մի քանի ներկայացուցիչներ ելույթներով ներկայացրեցին իրենց երկրի փորձը, իսկ մյուս մասնակիցներին հնարավորություն տրվեց ելույթներից հետո քննարկման ընթացքում ներկայացնել նաև իրենց երկրների փորձը:

Օրվա ընթացում քննարկված հաջորդ տեմանները եղել են «Մանրածախ առևտրի պայմանագրերի թափանցիկության բարձրացումը՝ գունավոր ազդանշանների ներմուծմամբ» և «Դինամիկ գնագոյացման կարգավորող դաշտը»: Թեմաներով ելույթ են ունեցել Հունաստանի ներկայացուցիչները, որից հետո մյուս երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ հարցերի ու պատասխանների միջոցով եղել է թեմայի շուրջ ակտիվ քննարկում:

17.10.2024թ

Հանդիպման ընթացքում քննարկվել են էներգետիկ ոլորտում խոցելի սպառողներին առնչվող հարցերը: Յուրաքանչյուր երկրի ներկայացուցիչ ելույթի միջոցով ներկայացրեց իր երկրի փորձը: Կլոր սեղան ակտիվ քննարկումներն հնարավորություն տվեցին հարցերի ու պատասխանների միջոցով ստանալ լրացուցիչ տեղեկություններ, ամրապնդել երկրների օրինակներով ներկայացված տեղեկատվությունը:

Հանդիպման ընթացքում Հունաստանի ներկայացուցիչը ելույթ ունեցավ «Էներգետիկ սպառողներին թվայնացված ծառայությունների մատուցում» թեմայով: Մյուս երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ հարցերի ու պատասխանների միջոցով եղել է թեմայի շուրջ ակտիվ քննարկում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են նաև սպառողների պաշտպանության կոմիտեի առաջիկա և հաջորդ տարիների աշխատանքային պլանը, տարվելիք աշխատանքները:

7.Հանդիպումները, ելույթները.

Երկօրյա հանդիպման ընթացքում ելույթ եմ ունեցել՝

1. *«Էներգետիկայի բնագավառում սպառողների պաշտպանությանն առնչվող՝ երկրների վերջին նորությունները/փոփոխությունները» թեմայով,*
2. *«Խոցելի սպառողները» թեմայով:*

1.Ներկայացվել են Հայաստանի էներգետիկ համակարգում վերջին փոփոխությունները, մասնավորապես՝ էլեկտրաէներգետիկական շուկայի ազատականացում, օրենսդրական փոփոխությունները, վերականգնվող էներգետիակայի զարգացման միտումները, այդ թվում՝ ինքնավար էլեկտրաէներգիայի արտադրությունը,սակագնային փոփոխությունները, ինչպես նաև համակարգում պլանավորված և սպասվելիք բարեփոխումները:

2.Տրվել է Հայաստանում «խոցելի սպառողներ» հասկացության օրենսդրական սահմանումը, խոցելի սպառողներ դառնալու ընթացակարգը, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից իրականացվող կարգավորումները:

8.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Երկրների միջև համագործակցությունը պահպանելու, երկրներում տեղի ունեցող փոփոխություններին, զարգացումներին ծանոթանալու, ինչպես նաև արդյունավետ փորձերի փոխանակման համար ձեռք է բերվել պայմանավորվածություն կապը պահպանել

նաև էլեկտրոնային տարբերակով՝ նյութերի փոխանակման նպատակով: Հանդիպման արդյունքում նախնական որոշում է կայացվել հաջորդ հանդիպման օրվա, ինչպես նաև քննարկման համար թեմաների վերաբերյալ: Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև «Կարգավորող մարմնի իրավական գործառույթները» թեմայով ուսումնասիրության ընթացքին առնչվող քայլերի վերաբերյալ:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները-

Աշխատանքային պլանի քննարկման արդյունքում որոշվել է, որ առաջիկա շաբաթվա ընթացքում էլեկտրոնային տարբերակով խմբի մասնակիցները կշարունակեն ուղարկել հաջորդ հանդիպումների թեմաներն իրենց համառոտ նկարագրությամբ:

Գործուղվող՝ Ա. Առաքելյան _____
ստորագրությունը

Գործուղվող՝ Լ. Ալեքսանյան _____
ստորագրությունը

22.10.2024թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով**

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 949-ԳՔ 18.09.2024**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննքրկման վարչության դիմումների քննարկման բաժնի պետ՝ **Անժելա Առաքելյան**

ՀՀ ՀԾԿհանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննքրկման վարչության դիմումների քննարկման բաժնի գլխավոր մասնագետ՝ **Լուսինե Ալեքսանյան** ,

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **ք.Աթենք** / Հունաստան/

5. Գործուղման ժամկետները **15.10.2024 - 18.10.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն**)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անժելա Առաքելյան	Լուսինե Ալեքսանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	11,224	11,224	22.448
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	224,470	224,470	448.940
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝եվրո)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	151,464	112,778	264.242
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝ եվրո)	93	93	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	40,290	40,290	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	161,161	161,161	322.322
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար	14,700		
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		563.019	509.633	1,057.952

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 24.10.2024թ.